

## ՈՒՄ «ՅՈՒՆՈՎԱԿԵՐՏԸ» ԳՐԱԲԱՐՈՒՄ

L. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գրաբարի հոլովական հարացույցում առանձնանում են երկու կարգի մասնիկներ՝ հոլովիչներ և հոլովակերտներ: Հոլովիչները որոշում են հոլովման բնույթը, այսինքն՝ ինչ հոլովիչով է կատարվում բառի թեքումը, իսկ հոլովակերտները կերտում են այս կամ այն հոլովը և հատուկ են որոշակի հոլովի:

Իբրև հոլովիչներ հանդես են գալիս *Ա, Ե, Ի, Ո, Ու* ձայնավորները, հոլովակերտ մասնիկները հանդես են գալիս եզակի բացառականից սկսած և կայուն են հոգնակի թվի բոլոր հոլովներում:

Գրաբարի քերականության տեսական և գործնական ձեռնարկներում կարդում ենք, որ *Ո* կամ *Ո-Ա* հոլովումներին պատկանող բառերը (գոյական, ածական, թվական) և դերանվանական հոլովում ունեցող որոշ դերանուններ եզակի տրականում ստանում են *ուՄ* հոլովակերտը (վերջավորությունը): Այսինքն՝ այդ կարգի բառերը եզակի սեռականում ստանում են հոլովիչ, իսկ տրականում հոլովիչի փոխարեն՝ հոլովակերտ մասնիկ: Գրաբարի քերականների ուշադրությամբ չի արժանացել այս հարցը, թե ինչու առաջին թեք հոլովից հետո հաջորդ թեք հոլովը հոլովիչ «չի ստանում», այլ նրան փոխարինում է *ուՄ* հոլովակերտը:

Դիոնիսիոս Թրակացու աշխատության «Յաղագս դերանունության» բաժնում ստացական դերանունների տրական հոլովում հանդիպում ենք *ուՄ* մասնիկով ձևերի՝ *իմում, քում, նում*<sup>1</sup>:

Անանուն Մեկնիչի աշխատության մեջ՝ *իմումն, քոյումն, նորայումն* (էջ 151), Մովսես Քերդողի մոտ՝ *իմումն, քոյումն, քումն, նորայումն* ( էջ 176):

Մխիթար Սեբաստացին<sup>2</sup> իր աշխատության «Յաղագս հոլովման» բաժնում *ուՄ* մասնիկով ձևեր է ցույց տալիս գոյականի (*մարդում*, էջ 242), հարցական անունների (*որու՞մ*, էջ 38, *ու՞մ*, էջ 39), ստացական և հարաբերական դերանունների տրական հոլովաձևում (*իմում*, էջ 42, *որում*, էջ 43):

Ինչպես Թրակացու մեկնիչները, Սեբաստացին ևս չի անդրադառնում *ուՄ* մասնիկի ծագման հարցերին:

Գրաբարում եզակի սեռական և տրական հոլովները հազվադեպ ստանում են հոլովակերտ մասնիկներ: Այս կապակցությամբ Ա. Բագրատունին գրում է. «Ի լեզուիս մերում են այլ ևս երեք նախնական նշանք սեռականի և տրականի տառքս *ր, ջ, ս*, զոր կցեալ յամենայն անուանս *ոյ, ո, ու* ձայնատրոք, կամ թէ և առանց տոցա ևս, կամ յաւելլուածով իսկ այլոյ կանոնատր վերջի *ա, ին, ու*, կատարին այն երկու հոլովք՝ սեռականն և տրականն»<sup>3</sup>:

Ա. Բագրատունին, ըստ այդմ, *Ո* և *Ո-Ա* հոլովում ունեցող բառերի համար եզակի սեռականում նշում է *ոյր, ոջ* հոլովակերտներ, եզակի տրականում՝ *ուՄ*:

<sup>1</sup> Տե՛ս Н. Адонцъ, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 29, 151, 176:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբար լեզուի հայոց, Վենետիկ, 1770, էջ 27:

<sup>3</sup> Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացլոց, Վենետիկ, 1852, էջ 42:

Մ. Չամչյանի աշխատության մեջ՝ գոյականների հոլովման հարացույցում ում մասնիկ չի հանդիպում: Այն երևում է մասնական անունների (հուրաքանչիւրում, երկաքանչիւրում, էջ 25), ածականների (*միտում*, էջ 27), թվականների (*միում*, էջ 27), ստացական դերանունների (*քում*, *իմում*, *մերում*, *ձերում*, էջ 32), ստացական և ածանցական դերանունների թեք ձևերում (*նորայնում*, *սորայնում*, էջ 34) և այլն:

Գ. Թվետիքյանն իր աշխատության՝ մեջ ցույց է տալիս ում մասնիկով նոր ձևեր ինչպես թվականի՝ *միում* (էջ 25), այնպես էլ դերանվան հոլովման համակարգում՝ *սորայում*, *սոցայում*, *նորայում*, *նոցայում*, *դորայում*, *դոցայում* (էջ 39):

Վ. Չալըխյանը՝ ում հոլովակերտ մասնիկ է ցույց տալիս Ո հոլովման պատկանող անունների եզակի տրականում, ավելի շատ՝ ներգոյականում՝ «մանաւանդ-ին և -եայ վերջաւորողներուն՝ *վերին-վերնում*, *յետին-յետնում*, *գրեցեալ-գրեցելում*» (էջ 16): Այնուհետև նա վկայում է թվականի (*միում*, էջ 31), մասնական անունների (*այլում*, *միում*, էջ 38), ստացական և հարաբերական դերանունների համապատասխան ձևերը (*իմում*, *մերում*, *որում*, էջ 49-52) և այլն:

Ա. Այտընյանը գրաբարի ներգոյական հոլովի իմաստի դրսևորման միջոց է համարում ի նախորդ տրականը՝ ում վերջավորությամբ, ինչպես՝ *ի հնումն*, *ի նորումն*, *ի ձախում թեի*, *ի սրբում տեղոջ*, *ի ներքնում*<sup>7</sup> և այլն: Ա. Այտընյանը դերանվանական հոլովման եզակի տրականի գլխավոր ձև է դիտում ում կամ մ վերջավորությունը (էջ 439, 444):

Ի մի բերելով գրաբարի քերականների դիտարկումները ում մասնիկի վերաբերյալ՝ կարելի է ասել՝

ա) Բոլոր ուսումնասիրողները ում վերջավորություն են ցույց տվել Ո հիմք (հոլովում) ունեցող անունների և որոշ դերանունների հոլովական հարացույցում:

բ) Այդ մասնիկը հիմնականում համարել են հոլովակազմիչ ձևույթ՝ առանց անդրադառնալու նրա ծագման հարցերին (Դ. Թրակացու մեկնիչները և Միս. Սեբաստացին, Մ. Չամչյանը, Վ. Չալըխյանը, Գ. Ավետիքյանը, Ա. Բագրատունին, Ա. Այտընյանը): Հետագա ուսումնասիրողները, քննելով գրաբարի հոլովական հարացույցը, ում մասնիկը համարել են կա՛մ շեղում, կա՛մ փոխառյալ ձևույթ:

Գր. Ղափանցյանը հարցական և հարաբերական դերանունների հոլովական համակարգում ում մասնիկի առկայությունը համարում է շեղում, թեև միաժամանակ նկատում է, որ այդ մասնիկը կար արդեն Աստվածաշնչում, որը հետագայում դառնում է ներգոյական հոլովի նշան հունարենից թարգմանված որոշ գրվածքներում<sup>8</sup>:

Ա. Մելեն՝ գրաբարի ցուցական դերանունների թեք հոլովներում ցույց է տալիս երկու ձև՝ երկար ու կարճ, ինչպես՝ *այսմանէ*, *այդմանէ*, *այնմանէ* և *այսմ*, *այդմ*, որը նույնական է տրական-ներգոյականի հետ:

Այնուհետև նա եզրակացնում է, որ երկար ու կարճ ձևերի վերջավորությունն է մ՝ ում ավելի հիմ մի ձևի փոխարեն, որի ձայնավորը սղվել է, որովհետև այս բաները, լինելով վերջահարներ, նրանց ու ձայնավորը ենթակա էր հաջորդ բառի

<sup>4</sup> Տե՛ս Մ. Չամչեան, *Քերականութիւն հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1859, էջ 25-27, 32-34:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Աւետիքեան, *Քերականութիւն հայկական*, Վենետիկ, 1815, էջ 25:

<sup>6</sup> Տե՛ս Վ. Չալըխեան, *Քերականութիւն հայկազեան լեզուի*, Վիեննա, 1885, էջ 16, 31, 38, 49, 52:

<sup>7</sup> Տե՛ս Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1886, էջ 435:

<sup>8</sup> Տե՛ս Գր. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն*, հին շրջան, Եր., 1961, էջ 270:

<sup>9</sup> Տե՛ս Ա. Մելեն, *Հայագիտական հետազոտություններ*, Եր., 1978, էջ 238:

շեշտի ազդեցությանը (էջ 15):

Ա. Մեյեն *ուժ* դերանվանական վերջավորությունը բխեցնում է սանկր. *asmat*, ինչպես նաև - *asmin*, -*asmai* վերջավորություններից (էջ 238):

Մինչ այժմ եղած ուսումնասիրողներից միայն ակադ. Ա. Ղարիբյանը և ակադ.

Գ. Զահուկյանն են մասամբ անդրադարձել *ուժ* մասնիկի ծագման հարցերին:

Ա. Ղարիբյանը գրաբարի հոլովներից հատուկ հոլովակազմիչների առնչությամբ գրում է, որ *Ո* հոլովման պատկանող մի շարք բառեր տրականում ստանում են *ուժ* վերջավորություն, ինչպես՝ *մարդ-մարդոյ-մարդում, նոր-նորոյ-նորում, մի-միոյ-միում*:

Այնուհետև նա փորձում է բացատրել *ուժ* մասնիկի ծագումը և այն բխեցնում է *Ո* դերանվան տրական հոլովաձևից՝ եզրակացնելով, որ «գրաբարի դերանունների հոլովման երկրորդ տիպը (դերանվանական հոլովումը - Լ. Խ.) կազմվում է *Ո* դերանվան հոլովական ամբողջական ձևերի կցումով»<sup>10</sup>:

Գ. Զահուկյանը գրաբարի հոլովների կազմությունը ներկայացնելիս եզակի սեռականի և տրականի առնչությամբ գրում է, որ դրանք կազմվում են միատեսակ, սակայն «բացառություն են կազմում *Ո* հիմք ունեցող որոշ բառեր, որոնց դեպքում տրականն ունենում է *Մ* վերջավորությունը, այդ *Մ*-ից առաջ հիմքակազմ *ո*-ն փոխվում է *ու*-ի՝ հայերենի պատմական հնչյունափոխության սովորական կանոնով՝ *նորոյ-նորում, հնոյ-հնում, աջոյ-աջում, միոյ-միում* և այլն (այս ում-ը հետագայում բավական հաճախանում է՝ տարածվելով նաև այլ ձայնավորահիմք հոլովումների վրա)»<sup>11</sup>:

Այսպիսով, մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ ի՛նչ են արել հետագա ուսումնասիրողները.

ա) *Ուժ* մասնիկ ունեցող դերանվանական համապատասխան ձևերը համարել են կանոնավոր ձևերից շեղումներ (Գր. Ղափանցյան):

բ) *Ուժ* մասնիկը բխեցրել են հնդեվրոպական համապատասխան վերջավորություններից (Ա. Մեյեն):

գ) Այն համարել են *Ո* դերանվան տրական հոլովից առաջացած ձևույթ (Ա. Ղարիբյան):

դ) *Ուժ* մասնիկի ծագումը բացատրել են տրական հոլովի հիմքակազմիչ *Ո* ձայնավորի (հոլովիչի) պատմական հնչյունափոխությամբ (Գ. Զահուկյան)<sup>12</sup>:

Ինչպես նկատելի է, թե՛ գրաբարի և թե՛ հետագայի քերականների ուսումնասիրություններում *ուժ* մասնիկի ծագման հարցում առկա են հակասական, իրարամերժ տեսակետներ:

Մենք կարծում ենք՝ *ուժ* մասնիկի ծագումը պետք է բացատրել հայերենի հնչյունափոխական օրենքներով. մի իրողություն, որի ակունքները պետք է փնտրել լեզվի զարգացման նախագրային փուլում:

Որպես օրինաչափություն, կարող ենք ասել, որ *ուժ* մասնիկի առաջացումը կապվում է *Ո* հիմքով անունների թեքման հետ: Ընդ որում, *Ո* հիմքը տեսանելի է

<sup>10</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Եր., 1937, էջ 125, նաև էջ 112:

<sup>11</sup> Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 87:

<sup>12</sup> Մի շարք լեզվաբաններ գրաբարի հոլովման համակարգում *ուժ* ձևույթը նույնպես դիտել են իբրև հոլովակերտ մասնիկ՝ առանց անդրադառնալու նրա ծագմանը: Տե՛ս, մասնավորապես, Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 2, Եր., 1954, էջ 283-284, Բ. 3, էջ 406: Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ. 2, Եր., 1951, էջ 148: Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 18: Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 343: Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 52: Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Եր., 1974, էջ 145, 149: Մ. Մինասեան, Գրաբարի գործնական դասընթաց, Անթիլիաս, 1976, էջ 122:

գոյական, ածական անունների և թվականի որոշ տեսակների հոլովման դեպքում մարդ-մարդոյ-մարդում, աջ-աջոյ-աջում, առաջին- առաջնոյ-առաջնում:

Հարցի քննությունը, կարծում ենք, պետք է սկսել դերանունների թեքման ձևերի տիպաբանական վերլուծությունից, քանի որ նրանց որոշակի ձևերում հանդես են գալիս *ր*, *մ* մասնիկները, որոնցից երկրորդը որոշակի դեր ունի ում մասնիկի ձևավորման գործում:

Դերանունների թեքման ձևերի տիպաբանական վերլուծությամբ կարելի է վերականգնել դրանց նախնական վիճակը կամ կառուցվածքային այն քայլերը, որոնցից առաջացել են թեքման համապատասխան ձևերը:

Այսպես, ցուցական դերանունները հոլովական հարացույցում ակնհայտորեն ունեցել են *Ո* հիմք՝ *սա-սո, դա-դո, մա-մո*, որ գտնում ենք եզակի *ս-ո-ր-ա, դ-ո-ր-ա, մ-ո-ր-ա* և հոգնակի *ս-ո-ք-ա, դ-ո-ք-ա, մ-ո-ք-ա*, ինչպես նաև *այս, այդ, այն* և *սոյն, դոյն, մոյն* դերանունների հոգնակի ձևերում՝ *այս-ո-ք-իկ, այդ-ո-ք-իկ, այն-ո-ք-իկ, ս-ո-ք-իկ, դ-ո-ք-իկ, մ-ո-ք-իկ*:

Եզակի թվի համապատասխան ձևերում *ր* և *մ* մասնիկների օգնությամբ կազմվում են *սո-ր-ա, դո-ր-ա, մո-ր-ա* (սեռական) և *ս(ո)-մ-ա, դ(ո)-մ-ա, մ(ո)-մ-ա* (տրական) ձևերը:

Այս, այդ, այն դերանունների թեքման հարացուցային ձևերը ցույց են տալիս, որ այդ դերանունները ևս թեքվում են *Ո* հիմքով, որ երևում է հատկապես դրանց կարճ և երկար ձևերի համեմատական քննությունից: Հմմտ.

այս-այս(ո)ր → այս-ո-ր-իկ	} սեռ. հ.	այս-այս(ո)մ → այս(ո)-մ-իկ	} տր. հ.
այդ-այդ(ո)ր → այդ-ո-ր-իկ		այդ-այդ(ո)մ → այդ(ո)-մ-իկ	
այն-այն(ո)ր → այն-ո-ր-իկ		այն-այն(ո)մ → այն(ո)-մ-իկ <sup>13</sup>	

Մենք կարծում ենք, որ այս զույգ ձևերից նախնականը կարճ ձևն է, այն էլ՝ առանց մասնիկավոր (*ր*, *մ*) հիմքի: Կարելի է ենթադրել, որ նախապես եղել են սեռական-տրականում ընդհանուր ձևեր (որ հատկանշական է գրաբարի անվանական հոլովման համակարգին). *այսոյ, այդոյ, այնոյ*:

Հետագայում հնդեվրոպական դերանվանական թեքման ձևերի համաբանությամբ առաջացել են *ր*, *մ* մասնիկները<sup>14</sup> (տարբերակելու համար սեռական և տրական հոլովները): Իսկ հոգնակի թվի *-իկ* մասնիկը չեզոք ձևույթ է և ոչինչ չի ավելացնում բառաձևի քերականական իմաստին:

Կարելի է կարծել նաև, որ սեռական-տրական հոլովաձևերում բառի թեքված հիմքերը վերջավորվել են *յ* ձայնորդով՝ *այսոյ, այդոյ, այնոյ...*:

Այս իրողությունը պահպանվել է որոշ դերանունների թեքման ձևերում, ինչպես՝ *հյր-հյրոյ, այլ-այլոյ, միւս-միւսոյ* և այլն:

Միաժամանակ պետք է ասել, որ սեռական հոլովում *ր* մասնիկը միշտ չի պահպանվել. հմմտ. *որ-որոյ, այլ-այլոյ, միւս-միւսոյ*, թեև համապատասխան ձևերը ենթադրում են նախագրային *որոյոյ, այլոյոյ, միւոյոյ* և նման ձևերի գոյությունը<sup>15</sup>:

Սեռական հոլովում *ր* մասնիկով ձևեր (*յ+ր*) գտնում ենք *Ո* դերանվան համապատասխան հոլովաձևում՝ *ո→ո+յ+ր>ոյր*:

<sup>13</sup> Դերանվանական այս ձևերում *ո* ձայնավորի անկունը (շեշտափոխության գործոնով պայմանավորված կամ համաբանությամբ) գտնում ենք այդ դերանունների արդի գրական ձևերում. հմմտ. սորա-սրա, դորա-դրա, մորա-մրա:

<sup>14</sup> Հմմտ. Ա. Մելեի տեսակետը:

<sup>15</sup> Հմմտ: Ա. Բագրատունու տեսակետը. «Ոյր խափանեալ է այժմ, երևի ստեպ մարդոյր, ձիոյր, միայնոյր, ասացելոյր, միոյր, եզոյր...» զ նախդրի բացատրական *-գձիոյր, գմիոյր...* (Ա. Բագրատունի, Աշխ. աշխ., էջ 42):

Ինչպես ասացինք, *ր*, *մ* մասնիկները հատկանշական են *Ո* հոլովիչով հիմքին, որոնք մինչ այդ մասնիկներն ստանալը վերջավորվելիս են եղել *յ* ձայնորդով: Պետք է ասել, որ *մ* մասնիկը ավելի կայուն է եղել և ամրացել է բառաձևի կառուցվածքային պլանում: Հմմտ. *այլ-այլոյ(ր)→այլոյ(մ)*, *միւ-միւտոյ(ր)→միւտոյ(մ)*, *որորոյ(ր)→որորոյ(մ)*:

Անվանական հոլովման դեպքում կատանանք՝ *մարդ-մարդոյ(ր)→մարդոյ(մ)*, *հիւ-հիւոյ(ր)→հիւոյ(մ)*, *աջ-աջոյ(ր)→աջոյ(մ)*, *մի-միոյ(ր)→միոյ(մ)*, *առաջիւ-առաջնոյ(ր)→առաջնոյ(մ)* և այլն:

Գրաբարի հնչյունափոխական օրենքներից հայտնի է, որ *յ* ձայնորդը կարող է փոխակերպվել *ւ* ձայնորդի:

Դրանք լծորդ հնչյուններ են և կարող են փոխարինել միմյանց՝ հաճախ բառաձևին հաղորդելով քերականական նոր իմաստ: Հմմտ. *մայր-մայր*, *հայր-հայր*, *եղբայր-եղբայր*:

*Յ*// *ւ* լծորդությունը բայական բառույթի թեքման ձևերում չունի քերականական նշանակություն: Այսպես՝ *կոչէր>կոչիւր*, *տեսանէր>տեսանիւր* ձևերում ունենք *է < ե+յ*, որտեղ՝ *ե > ի*, *յ > ի+ւ+ր=իւր* դիմաթվային վերջավորությունը:

Բառաձևն այլ պատկեր է ստանում, երբ *յ* *հ* հնչյունափոխությունը կատարվում է *Ո* ձայնավորի (հոլովիչի կամ բառի թեքման ձայնավորի) մոտ:

Հմմտ. *թողոյի-թողոյիր-թողոյր>թողուի-թողուիր-թողուր*, *կիզոյի-կիզոյիր-կիզոյր>կիզուի-կիզուիր-կիզուր*, *այս (այս-ո-յ-ր>այսուր) ր-ի անկումով-այսու* (գործիական)*+իկ*, *այդ (այդ-ո-յ-ր)-այդ-ու-իկ*, *այն (այն-ո-յ-ր)-այն-ու-իկ*:

*Ո* ձայնավորին հաջորդող *յ* *հ* հնչյունափոխությունը հանգեցնում է *ո+ւ* հնչյունական բաղադրիչներին, որոնք ձևավորում են *ու* երկբարբառային ձայնավորը: *Ո* հիմքով այն բառերը, որոնք տրականում ունեցել են *ո+յ* *ո+ւ* հնչյունափոխությունը, հանդիպելով *մ* հոլովակերտին, ձևավորում են *ում* բաղադրյալ մասնիկը, որ կարծեցյալ հոլովակերտի արժեք է ստանում:

Հետևաբար վերոբերյալ դերանունների և անունների տրականի ձևերը կատանան հետևյալ պատկերը՝ *այլ-այլոյմ > այլում*, *միւ-միւտոյմ > միւտում*, *որ-որոյմ > որում*, *ո-ոյմ > ում*, *մարդ-մարդոյմ > մարդում*, *հիւ-հիւոյմ > հիւում*, *աջ-աջոյմ > աջում*, *մի-միոյմ > միում*, *առաջիւ-առաջնոյմ > առաջնում* և այլն:

*Ում* «հոլովակերտը» բաղադրյալ ձևույթ է՝ կազմված *ո+ւ+մ* տարրերից, որտեղ *ո-ն* հոլովիչ է, *ւ-ն*՝ *յ* ձայնորդի հնչյունափոխված տարրերակը, *մ-ն*՝ տրականի հոլովակերտը: Ըստ այդմ, բոլոր այն բառաձևերում, որտեղ առկա է *ում* մասնիկը, կարելի է ցույց տալ *Ո* հոլովիչը:

Բառի թեքման ձևերում *ում* մասնիկը անփոփոխ չի պահպանվել. շեշտափոխության հետևանքով *ու-ն* սղվել է, որ գտնում ենք դարձյալ դերանվան թեք ձևերում, ինչպես՝ *այսում>այսմ*, *այսումիկ>այսմիկ*, *այդում>այդմ*, *այդումիկ>այդմիկ*, *այնում>այնմ*, *այնումիկ>այնմիկ* և այլն:

Թեև գրաբարի քերականության պատմության մեջ *-ում* մասնիկ ունեցող բառաձևերի վերաբերյալ ասվում է, որ դրանք սեռական հոլովում ստանում են *Ո* հոլովիչ, տրականում՝ *ում* հոլովակերտ մասնիկ, այնուամենայնիվ թեք հոլովում պետք է որ բառաձևը հոլովիչ ունենա, այլ բան է, որ հոլովիչը կարող է հանդես գալ հոլովակերտի հետ միաձույլ<sup>16</sup>: Այդ կարգի բառաձևերում հոլովիչն ու հոլովակերտ մասնիկը, ինչպես տեսանք, կարելի է առանձնացնել տիպաբանական վերլուծության միջոցով:

<sup>16</sup> Հետագայում *ում* ձևույթը ընդհանրացել է իբրև տրականի-ներգոյականի հոլովական իմաստի դրսևորման մասնիկ մակ այնպիսի բառերի համար, որոնք չեն թեքվում *Ո*

**Л. М. ХАЧАТРЯН - Падежное окончание - ում в габаре.** - В грамматических трудах по габару отмечается, что некоторые слова, изменяемые в формах склонения на основе Ո(օ), в дательном падеже получают падежное окончание -ում.

Делая типологический анализ окончания -ում, можно восстановить показатель склонения Ո(օ), который „скрывается” в падежном окончании (-ում).

Показатель склонения Ո(օ) в дательном падеже заканчивается сонантом յ, который является коррелятом сонанта ւ (ср. քաղք > քաղք, թողղի-թողղի-թողղի > թողղի-թողղի-թողղի). Следовательно:  $n + \text{յ} = n + \text{ւ} > n\text{ւ}$ .

Дифтонгная гласная ու, в дательном падеже встречаясь с падежным окончанием մ, образует сложную морфему -ում, в которой Ո(օ) - показатель склонения, ւ - вариация фонетического изменения сонанта (յ), մ - окончание дательного падежа.

---

Ռիմքով: Այդ կազմութիւնները անալոգիայի հետևանք են, որոնք Ա. Բագրատունիին համարում է «անտվորք», ինչպես՝ բանում, ճշմարտում, ենթակայում, հնարում, ի քարում, ի փայտում, յանբանում, չարում, յաշխարհում, ի ժամանակում, ի լաւում, ի միջակում, ի պահարանում, ի կաթնում (էջ 43-44):

Այս կարգի բառերի համար ում ձևույթը իրավամբ կարելի է դիտել իբրև հոլովակերտ մասնիկ: